

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորապատ գյուղական համայնքի ղեկավարի 2014թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Հաշվետու ժողովը տեղի է ունեցել 2015 թվականի հունվարի 20-ին ժամը 14.00-ին համայնքի կուլտուրայի տան դահլիճում:
Ժողովին մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմը, դպրոցի ուսուցիչներ, մանկապարտեզի կուլեկտիվի անդամներ, համայնքի բնակիչներ և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ Գոռ Հովհաննիսյանը:

Ջեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար՝ Ս.Բադայանը, որն իր աշխատանքները կազմակերպում է իրեն սահմանված լիազորությունների շրջանակներում:

2014թվականի ընթացքում հրավիրվել է տասներեք ավագանու նիստեր, որոնցում քննարկվել են համայնքին վերաբերվող մի շարք հարցեր և դրանց վերաբերյալ ընդունվել համապատասխան որոշումներ: Ընդունված որոշումների կատարման մասին իրազեկվել է համայնքի ազգաբնակչությանը:

2014թվականի ընթացքում համայնքի ղեկավարին տարբեր հարցերով դիմել են 45 քաղաքացիներ, որոնց պահանջներին տրվել են համապատասխան լուծումներ: 538 քաղաքացիների տրվել է տարբեր բնույթի տեղեկանքներ, 3-ին՝ շինարարության իրավունք:

Գյուղատնտեսության բնագավառ

2014 թվականի ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, բարձր բերքի ապահովման ուղղությամբ:

Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում համայնքի հողագործներին վաճառված 3600,0 հազար դրամի պարատանյութը խթան հանդիսացավ արտադրվող մթերքների ինքնարժեքի իջեցման, ստացվող շահույթի ավելացման համար:

2014 թվականի մարտի 31-ապրիլի 2-ը ցրտահարության հետևանքով համայնքի 15 հողագործներին հասցված վնասի հատուցման համար կառավարության կողմից որպես հողի հարկ տրամադրվեց 103594 դրամ օգնություն, իսկ ջրի վարձը զիջվեց 50%-ի չափով:

Ցրտահարության հետևանքները վերացնելու նպատակով համայնքապետարանի ուժերով կազմակերպվել է մեթոդական օգնություն կորցրած բերքի վերականգման և եկող տարվա համար բարձր բերքի ապահովման ուղղությամբ: Կառավարության աջակցության միջոցներով ցրտահարությունից տուժած հողատերերին հատկացվեց 1,0 կգ ձմերուկի, 0,5 կգ սեխի, 0,3 կգ վարունգի, 0,1 կգ լոլիկի սերմեր:

Ժամանակին է կազմակերպվել ջրատարների վերանորոգումը, դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը:

Կենցաղ սպասարկման բնագավառ

Բնակչության կենցաղային հարցերը եղել և մնում են համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Համայնքի տարածքում կատարվում է անվճար աղբահանություն, որի համար 2014 թվականի ընթացքում ծախսվել է 1154,0 հազար դրամ գումար: Աշխատանքներ են տարվում համայնքի նորաստեղծ թաղամասերում ավարտին հասցնելու էլ. էներգիայի մատակարարումը: Աշխատանքներ են տարվում նաև գազաֆիկացման ուղղությամբ: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ ջրի մատակարարումը համայնքում դարձել է 24 ժամյա:

Մշակույթ և սպորտի բնագավառ

Համայնքապետարանը կուլտուրայի տան և դպրոցի կուլեկտիվի հետ համատեղ կազմակերպում է մի շարք միջոցառումներ՝ տրամադրելով նաև որոշակի դրամական օգնություն::

Համայնքապետարանը իր մշտական աջակցությունն է ցուցաբերում մանկապարտեզում կազմակերպվելիք միջոցառումներին:

2014 թվականին լավ ու բարի գործերի անմոռաց իրողություն գրվեց Նորապատի դպրոցի տարեգրության մեջ: 2014-2015 թթ ուս. տարվա

սկզբին դպրոց այցելեց Հանրապետության նախագահ Մերժ Սարգսյանը, Արմավիրի մարզպետ՝ Աշոտ Ղահրամանյանը մասնակցելու հիմնանորոգված կրթօջաղի հանդիսավոր բացման արարողությանը, որի մեջ իր մեծ ներդրումն ունի նաև մեր համագյուղացի գործարար՝ Հրանտ Սպարտակի Սահակյանը: Կատարված աշխատանքների շնորհիվ ունենք վերակառուցված մարզահրապարակ, դահլիճ, հարմարավետ դասասենյակներ: Արդյունքում դպրոցը ունեցավ լուրջ ջեռուցման ժամանակակից պայմաններ: Համագյուղացիները այսպիսի համակողմանի ուշադրության և հոգատարության համար իրենց շնորհակալությունն են հայտնում Հանրապետության նախագահին, մարզպետին և բարերարին:

Սոցիալական բնագավառ

Համայնքապետարանը իր ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահում սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելու, նրանց դիմումներին ընթացք տալու գործընթացին: 2014թվականի ընթացքում 88 ընտանիքների տրամադրվել է 4700,0 հազար դրամի օգնություն: 16 ընտանիքներ ընդգրկված են նպաստառուների ցուցակում, երկու զինծառայող ազատվել է ավտոմեքենայի գույքահարկից:

Պաշտպանության կազմակերպման բնագավառ

2014թվականի ընթացքում պաշտպանության կազմակերպման բնագավառում իրականացվել են մի շարք միջոցառումներ: Սահմանված կարգով համայնքապետարանը համագործակցել է տարածքային զինկոմիսարիատի հետ, նպաստել զորակոչին: Համայնքի զինապարտների գրանցամատյանում կատարվել է լրացումներ: Համայնքապետարանը աջակցել է համայնքի երիտասարդությանը ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ: 2014 թվականի ընթացքում համայնքից Հայաստանի Հանրապետության բանակ են զորակոչվել վեց երիտասարդներ:


Համայնքային բյուջեյի իրագործում

Բյուջեյի կատարման գործընթացը մշտապես եղել է համայնքի ղեկավարի առաջնահերթ ուշադրության կենտրոնում:
2014թվականի ընթացքում հավաքագրվել է հողի հարկ՝ 6954,3 հազար դրամ, գույքահարկ՝ 8119,1 հազար դրամ:
Աշխատակիցները սահմանված կարգով օգտվում են իրենց սահմանված արձակուրդներից:

Համայնքի հիմնախնդիրները

5. Ոռոգման ջրի ինքնահոս մատակարարում
6. Մշակույթի տան շենքի նորոգում
7. Մրգաշատ տանող ճանապարհի նորոգում
8. Գյուղում գիշերային լուսավորության անցկացում:

Նորապատ համայնքի ազգաբնակչությունը համայնքապետ՝ Ս.Բաղայանի գլխավորությամբ իրենց խորին շնորհակալությունն են հայտնում մարզպետ պարոն՝ Ա. Ղահրամանյանին համայնքի կողմից բարձրացված խնդիրներին լուծում տալու համար և լի են վճռականությամբ համայնքի առջև ծառայած խնդիրները կյանքի կոչելու ուղղությամբ:

Նորապատ համայնքի ղեկավար՝  Ս.Բաղայան

